րուած գործ մը կը վարձատրէ, փոխանակ դարակներու մէջ քնանալու դատապարտուած ձեռագիրներու դրամ տալու։

T. TUTUNDJIAN, Du Pacte politique entre l'Etat ottoman et les nations non-musulmanes de la Turquie. Dissertation pour le Doctorat. Lausanne 1904. 8⁰ pp. 116.

Ն. ԿՈՐԿՈՏԵԱՆ. Ճամբորդութեան տպաւորութիւններ ի Զուիցերիա։ Գահիրէ 1903. տպ. Ե. Թորոսեանի։ 8⁰ էջ. 42։ Գինն է՝ 3 ղրշ.

Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ, Ընտրութիւն կաթնատուներու։ (Գիւղատնտեսական գրքոյկ. հրատարակութիւն Յովհ. Արամեանցի)։ Պետերբ. 1904։ 8⁰ էջ. 40։ Գինն է 15 կոպ.

Ա. Մ. ԾՈՑԻԿԵԱՆ. Տարածուած ախտը։ Բագու 1904. տպ. «Արօր»։ 8⁰ էջ. 34։ Գինն է 3 կոպ.

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ. Բնաշրջականի մը ներշնչումները։ Մասն Ա։ Ռօքսբըրի 1904. տպ. Փիլիպ. եւ Տիր.։ 8⁰ էջ. 112։ Գինն է 25 սէնթ։

Գ. ԽԱՉԿՈՆՑ. Նոր պատկերազարդ Աշխարհագրութիւն, բազմաթիւ քարտէսներով։ Ա. եւ Բ տարի, տարրական դասընթացք։ Կ.Պ. 1904. տպ. Մատթ.։ 4⁰ էջ. 36։ Գինն է՝ 3 ղրշ.

—, —։ Գ եւ Դ տարի, Միջին դասընթացք։ Տպ. նոյն։ 4⁰ էջ. 86։ Գինն է՝ 7 դհկ.։ Երկուքն ալ հրատարակութիւն Պ. Պալենց գրատան։

ՍԵՐ. Վ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, Տրադիր կենաց։ Կ.Պ. 1903. տպ. Մատթ.։ Փոքր 8⁰ էջ. 168։ Գինն է՝ 5 ղրշ.

ԲԱՐԳԷՆ Ծ. Վ. ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ. Քարոզներ։ Հտ. Ա։ Կ.Պ. 1904. տպ. Մատթ.։ Փոքր 8⁰ էջ. ԺԶ+388։ Գինն է՝ 10 ղրշ.

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ. Խօսք եւ Ցուցք 1903։ Վիեն. 1904։ 8⁰ էջ. 50։ Գինն է 5 դհկ. «Յօգուտ Գալֆայեան Աղջկանց Որբանոցին Խասգիւղի»

Գ. ԲՕՅԱՋԵԱՆ. Հայ ժողովրդական երգեր, ձայնագրուած։ Պարիս 1904, տպ. Ռէօդէր։ 4⁰ էջ. 32։ Գինն է՝ 5 ֆր.

Կ. Ց. Բ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ

«Բանասէր»ի խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել իր համակիրներուն, ընթերցողներուն եւ բաժանորդներուն, որ 1905-ի Յունուարէն սկսելով «Բանասէր» պիտի հրատարակուի բոլորովին նոր ծրագրով եւ նոր ուղղութիւնով։

«Բանասէր» պիտի շարունակէ իր բանասիրական եւ հնախօսական յօդուածներու շարքը, աւելի ժողովրդականացած նոր ձեւի մը տակ։

«Բանասէր» ընդարձակ տեղ մը պիտի տայ՝ «Ժողովրդական Համալսարան» բաժնի մը տակ՝ գիտական, գրական, արուեստական, իմաստասիրական, հոգեբանական, բազմարուեստական եւ հասարակագիտական յօդուածներու։

«Բանասէր»ի 1905-ի Յունուարէն սկսելով նոր վարչութիւն մը կազմուած է, եւ նոր շրջանը պիտի սկսի նոր ոյժերով։

ԽՄԲ.

Paris. — Impr. Scorio. 25 rue Turgot. La Gérante : C. Carbonnel.

digitised by A.R.A.R.@